ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ*

# ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8

Հեռ. 6 – 00- 89 23.11.2012թ

## ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՆԵՐ) (ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ) ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի պահանջներով

<u>որոշում</u>

1. Այգավանի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց ատեստավորման և թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար ներկայացուցիչներ առաջադրել ավագանու երեք անդամի՝ Գեղամ Հարությունյանին, Հենրիկ Ավետիսյանին, Ռոբերտ Գևորգյանին:
2. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 20.01.2010թ.-ի 1-ին որոշման 2-րդ կետը:

Ավագանու անդամներ՝

Ավետիսյան Հ,----կողմ, Գևորգյան Ռ,--կողմ

Հարությունյան Գ,--կողմ, Չիլինգարյան Ա. –կողմ

Ղազարյան Հ,--կողմ, Սիմոնյան Ն,--կողմ

Պետրոսյան Ռ,----կողմ,

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ*

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9

Հեռ. 6 – 00- 89 — 23.11.2012թ

# ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ավագանին նշում է, որ 2012թ-ի երրորդ եռամսյակում հողի հարկի գծով բյուջեն կատարվել է 75, 7%, գույքահարկը՝ 44,1 %, վարձ վճարներինը 87,0%, տեղական տուրքերինը՝ 93,9%:
Գույքահարկի պլանը թերակատարվել է ավտոմեքենաների տեխ. զննության ուշացման պատճառով (ավտոմեքենաների տեխ. զննությունը հիմնականում կատարվում է նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին) ուստի,
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34 հոդվածի 1-ին կետի պահանջներով

<u>որոշում</u>

Ընդունել Այգավան համայնքի բյուջեի 2012թ.-ի 3-րդ եռամսյակի կատարողականի մասին հաղորդումը:

Ավագանու անդամներ՝

Ավետիսյան Հ,----կողմ, Գևորգյան Ռ,--կողմ
Հարությունյան Գ,--կողմ, Չիլինգարյան Ա. –կողմ
Ղազարյան Հ,--կողմ, Սիմոնյան Ն,--կողմ
Պետրոսյան Ռ,----կողմ ,

ԱՅԳԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ*

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10

Հեռ. 6 – 00- 89 | 23.11.2012թ

# ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավագանին նշում է, որ համայնքի բյուջեի եկամտային մասում ներառվել է համայնքի տարածքում և գյուղապետարանի հաշվեկշռում գտնվող մանկապարտեզի և մշակույթի տան գույքահարկերը, որոնք բնականաբար չեն գանձվում: Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով

**որոշում**

1. Այգավան համայնքի 2012թ-ի բյուջեի եկամտային և ծախսային մասը հաստատել 63020000 դրամ նախկին 63760000 դրամի փոխարեն, պակասեցնելով 740000 դրամ: Բյուջեի եկամտային մասի գույքահարկը նախկին 4787000 դրամի փոխարեն հաստատել 4047000 դրամ: Համայնքի բյուջեի ծախսային մասը պակասեցնել 740000 դրամով նախադպրոցական կրթություն ծախսային ծրագրի 4639 հոդվածից:
2. Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից պակասեցնել 700000 դրամ, այն ավելացնել սոց. անապահով ծախսային ծրագրի 4729 հոդվածին:

Ավագանու անդամներ՝

Ավետիսյան Հ,----կողմ , Գևորգյան Ռ,--կողմ

Հարությունյան Գ,--կողմ , Չիլինգարյան Ա. –կողմ

Ղազարյան Հ,--կողմ , Սիմոնյան Ն,--կողմ

Պետրոսյան Ռ,----կողմ ,

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ